ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 4-ին, կիրակի.—Զ օր Ծնընդեան պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ աբդ. Սարգսյանը:

*
* *

Հունվարի 7-ին, չորեքշաբթի.—Բ օր Ծնընդեան. Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Հունվարի 9-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Երևանի հայրապետական վիլլայում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվում է աղետի հետևանքով Վենետիկի հայոց ս. Ղազար վանքի կրած նյութական մեծ կորստի հարցը:

*
* *

Հունվարի 11-ին, կիրակի.—Զ օր Ծնընդեան.

Այսօր Մայր տաճարում պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

*
* *

Հունվարի 12-ին, երկուշաբթի.—Ամանորի և ս. Ծննդյան տոների արձակուրդներից հետո հոգևոր ճեմարանում վերսկսվում են դասավանդությունները:

*
* *

Հունվարի 13-ին, երեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը:

*
* *

Նույն օրը. Մոսկվայում, ռուս պրավոսլավ եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի կենտրոնում, գումարվում է Մոսկվայի Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողով նախապատրաստող կոմիտեի խորհրդակցական ժողովը, որին, հանուն Մայր Աթոռի և հայ եկեղեցու, մասնակցում էր դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ որպես կոմիտեի

տասը հոգուց բաղկացած անդամներից մեկը:

Սույն խորհրդակցությունում որոշվել է մարտի 29—31-ը Մոսկվայի մոտ, ռուսական Զագորսկ վանքում, հրավիրել Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողով նախապատրաստող կոմիտեի ընդլայնված նիստը, միջազգային մակարդակով:

Մոսկվայի Խաղաղության ուժերի բարեկամների միջազգային համաժողովը հրավիրվելու է Մոսկվայում, 1977 թվականի սկզբներին:

Տ. Արսեն եպս. Բերբերյանը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 20-ին:

* * *

Նույն օրը, Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ, Վեհափառ Հայրապետն այցելում է Երևան, Արարատյան թեմի առաջնորդարան, ուր Նրան ջերմորեն դիմավորում են Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և թեմականի պատվարժան անդամները:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը և Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Քեհյայանը:

Առաջնորդարանում Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ընդունելություն:

Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, հանուն թեմի, ողջունում է Վեհափառ Հայրապետի ներկայությունը և զեկուցում թեմում կատարված եկեղեցական-վանական նորոգչական աշխատանքների մասին:

Վեհափառ Հայրապետի ներկայությունը ողջունում են նաև տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյանը, թեմականի ատենապետ Մուշեղ Սերոբյանը, Զավեն Աղասյանը, Գուրգեն Մուրադյանը, ապա Ա. Հատիտյանը և Գ. Քեհյայանը:

Վերջում օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում բոլորի Նոր տարին և ս. Ծնունդը ու ցանկություն հայտնում, որ մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսն ավարտվեն ս. Սարգիս եկեղեցու վերանորոգչական աշխատանքները, որպեսզի սեպտեմբերի հանդիսությունների ժամանակ կատարվի վերանորոգված եկեղեցու հանդիսավոր բացումը:

* * *

Հունվարի 17-ին, շաբաթ.—Հին տոմարով Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ, պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ հավատացյալների մխիթարության համար, Կիրովաբադ է մեկնում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ ընկերակցությամբ Միսաք սրկ. Մարգարյանի, Ախալքալաք՝ տ. Մոմիկ աբղ. Սարգսյանը, Արմավիր՝ տ. Հովսեփ քհն. Հակոբյանը, իսկ Թբիլիսի՝ Կիրակոս սրկ. Հովհաննիսյանը:

* * *

Հունվարի 18-ին, կիրակի.—Ա կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Հովհ. Գ 5) բնաբանով:

* * *

Հունվարի 25-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և քարոզում «Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա» (Ելք Ի 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհուրդը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ է նշանակում Մայր Աթոռի միաբան տ. Տիրան աբեղա Կյուրեղյանին:

* * *

Հունվարի 29-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը հանգրստանալու մեկնեց Կիսլովոդսկ, «Կրասնի կամեն» առողջարան:

Նորին Սրբությանն ուղեկցում էր տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը: